ՍԵՄԻՆԱՐ-ՔՆՆԱՐԿՈՒՄ՝ «ԵՐԻՏԱՍԱՐԴ ՖՐԱՆԿՈՖՈՆ ՓԱՍՏԱԲԱՆԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄՆԵՐ» ԽՈՐԱԳՐՈՎ

29.08.2019 18:52

Հարգելի՛ փաստաբաններ,

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատը «Ֆրանկոֆոն փաստաբանական միավորումների» միջազգային միության (CIB) հետ համատեղ ֆրանկոֆոն փաստաբանների համար **2019 թվականի սեպտեմբերի 3-ին և 4-ին** ՀՀ փաստաբանների պալատում կազմակերպում է երկօրյա սեմինար-քննարկում՝ ***«Երիտասարդ ֆրանկոֆոն փաստաբանի կարգավիճակի վերաբերյալ առաջարկություններ և եզրահանգումներ»*** խորագրով:

Ուշադրություն՝ սեմինար-քննարկումն անցկացվելու է միայն ֆրանսերենով՝ առանց հայերեն թարգմանության:

Սեմինարը կազմակերպվում է Ֆրանկոֆոնիայի Միջազգային Կազմակերպության (Organisation Internationale de la Francophonie) աջակցությամբ և ֆինանսավորմամբ և հանդիսանում է 2018 թվականի ապրիլին Կամերունի մայրաքաղաք Յաունդեում տեղի ունեցած համանուն խորագրով համաժողովի շարունակությունը:

Սեմինարի ընթացքում կներկայացվեն որոշակի վերլուծություններ, եզրահանգումներ, առաջարկություններ, որոնք հաստատվել են CIB անդամների կողմից 2018 թվականի դեկտեմբերին Շվեյցարիայի Լոզան քաղաքում տեղի ունեցած տարեկան ժողովի ժամանակ:

Սեմինարի նպատակն է կենտրոնական և արևելյան Եվրոպայի անդամ պետությունների փաստաբանական միություններին հասանելի դարձնել նշված վերլուծությունները, եզրահանգումները և առաջարկությունները: Քննարկումները տեղի կունենան հետևյալ թեմաների շուրջ՝

1. **«Երիտասարդ փաստաբանի մուտքը (ինտեգրումը) փաստաբանների միություն և փաստաբանական գրասենյակ».**
2. **«Երիտասարդ փաստաբանների մասնագիտական գործունեության առանձնահատկությունները».**
3. **«Երիտասարդ փաստաբանը՝ որպես քաղաքացի: Ի՞նչ դերակատարում պետք է փաստաբանն ունենա հասարակության շրջանում»:**
4. **«Երիտասարդ փաստաբանը և նորագույն տեխնոլոգիաները».**

Սեմինար-քննարկման յուրաքանչյուր օրվա մասնակցությունը յուրաքանչյուր փաստաբանի համար կհաշվարկվի 8 ակադեմիական ժամ վերապատրաստում (երկու օրը մասնակցելու դեպքում՝ 16 ակադեմիական ժամ):

Սեմինար-քննարկմանը կարող են մասնակցել **ոչ ավել, քան 15 (տասնհինգ) փաստաբան**: Նախապատվությունը կտրվի քննարկմանն ավելի վաղ գրացված փաստաբաններին: Կազմակերպչական հարցերից ելնելով խնդրում ենք սեմինար-քննարկմանը **գրանցվել մինչև 2019 թվականի սեպտեմբերի 2-ը, ժամը 13:00-ն՝ ani.gharibyan@advocates.am էլ. հասցեին** էլեկտրոնային հաղորդագրություն ուղարկելու միջոցով՝ նշելով Ձեր արտոնագրի համարը և հեռախոսահամարը:

ԽՆԴՐՈՒՄ ԵՆՔ ՔՆՆԱՐԿՄԱՆԸ ԳՐԱՆՑՎԵԼ, ԵԹԵ ՎՍՏԱՀ ԵՔ, ՈՐ ԿԱՐՈՂ ԵՔ ԴՐԱՆ ԺԱՄԱՅԻՆ ԱՌՈՒՄՈՎ ՄԱՍՆԱԿՑԵԼ ԱՄԲՈՂՋ ԾԱՎԱԼՈՎ:

Բեռնել սեմինար-քննարկման օրակարգը.

---

* * *

Համառոտ տեղեկություններ «Ֆրանկոֆոն փաստաբանական միավորումների»

միջազգային միության մասին

«Ֆրանկոֆոն փաստաբանական միավորումների» միջազգային միությունը (CIB) ստեղծվել է 1985 թվականին Փարիզում, որին այսօր անդամակցում են աշխարհի շուրջ 40 երկրների փաստաբանական միություններ: Հայաստանի փաստաբանների

պալատն անդամակցում է CIB-ին 2014 թվականի հոկտեմբերի 18-ից:

Այս կազմակերպության կանոնադրական նպատակներն են ապահովել անդամ փաստաբանական միությունների միջև համագործակցությունը՝ հարգելով միմյանց անկախությունը, պաշտպանել անդամ միությունների անկախությունը, ապահովել արդար դատաքննության կանոնները, նպաստել անդամ երկրների փաստաբանական համայնքներում փաստաբանի վարքագծի կանոնների պահպանմանը:

«Ֆրանկոֆոն փաստաբանական միավորումների» միջազգային միությունը միավորում է Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպության անդամ երկրների փաստաբանական միությունները: Հայաստանի Հանրապետությունը Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպության ասոցացված անդամ է դարձել 2008 թվականից: 2018թ. հոկտեմբեր ամսին Երևանում տեղի է ունեցել Ֆրանկոֆոնիայի միջազգային Կազմակերպություն գագաթնաժողովը և Հայաստանի Հանրապետությունը ստանձնել է Կազմակերպության նախագահությունը:

Առաջարկվող նորություններ

30.01.2014 ՀԱՆԴԻՊՈՒՄ ՀՈՒՆԱՀԱՅ ՓԱՍՏԱԲԱՆ ԱՆՆԱ ՍԱԱԿԻԴՈՒԻ ՀԵՏ

07.11.2014 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏՆ ԱՆԴԱՄԱԿՑԵԼ Է ‘ՖՐԱՆԿՈՖՈՆ ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ’ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆԸ

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })